

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»



ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Մ.Գ.Մանուչարյան
16 դեկտեմբերի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Դավիթ Զավենի Մարկոսյանի «Շրջանաձև բիզնես մոդելների ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Լիանա Խաչատրյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Եվգենյա Հակոբյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Բելլա Գաբրիելյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ստեփան Պապիկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ալվարո Մատինյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հովհաննես Ասատրյան՝ տնտեսագիտ. թեկնածու:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս համաշխարհային տնտեսության մեջ գերիշխում է գծային կամ ավանդական բիզնես մոդելը, որը բնութագրվում է մի շարք թերություններով: Այն նպաստում է ռեսուրսների արագ սպառմանը՝ պայմանավորված հումքի շարունակական արդյունահանման և ոչ կայուն օգտագործման օրինաչափությամբ: Մյուս կողմից չվերականգնվող ռեսուրսների սակավությունը հանգեցնում է դրանց ձեռքբերման բարձր գնին, հետևաբար՝ արտադրական ծախսերի աճին: Գծային տնտեսության կարևոր բնութագրիչներից է նաև առանց վերամշակման կամ

վերաօգտագործման հեռանկարների մեծ քանակությամբ թափոնների առաջացումը, որը վկայում է այդ մոդելի տնտեսական անարդյունավետության մասին:

Բացի այդ, գծային տնտեսությունը հանդիսանում է բնապահպանական ռիսկերի առաջացման պատճառ, քանի որ արտադրական գործընթացները և թափոնների կառավարման ոչ արդյունավետ համակարգերը մեծացնում են աղտոտվածության, ջերմոցային գազերի արտանետումների և կենսաբազմազանության կորստի վտանգները: Գծային տնտեսության մասին այս դիտարկումները և թերությունները ընդգծում են շրջանաձև տնտեսության սկզբունքներով գործող բիզնես մոդելներին անցման անհրաժեշտությունը: Շրջանաձև բիզնես մոդելները հնարավորություն են տալիս վերականգնել ռեսուրսները, նվազեցնել թափոնները և ձևավորել էկոլոգիապես կայուն արտադրություն:

«Սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրումը մեծ ներուժ ունի, սակայն դրանց կիրառությունը դեռևս սահմանափակ է՝ տեխնոլոգիական, ֆինանսական և շուկայական խոչընդոտներով պայմանավորված: Վերջիններս պետք է լուծվեն համակարգված մոտեցմամբ՝ պետական և մասնավոր ոլորտի համախմբված ջանքերի և համագործակցության միջոցով: Ուստի, տվյալ ուղղությամբ գիտական քննարկումները դառնում են խիստ հրատապ, որի անհրաժեշտությունն էլ պայմանավորել է սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

ՇԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Շետազոտության նպատակը «Սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների հեռանկարների բացահայտումն ու դրանց ներդրման կառուցակարգերի մշակման ուղիների առաջադրումն է: Նշված նպատակի իրագործման համատեքստում ատենախոսության շրջանակներում առաջադրվել ու լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել կլիմայական փոփոխությունների ազդեցությունը ագրոպարենային համակարգում և այս համատեքստում գնահատել տնտեսության գծային մոդելի հիմնական ռիսկերն ու թերությունները,
- գրականության համակողմանի ուսումնասիրության հիման վրա հայեցակարգել «շրջանաձև տնտեսություն» և «շրջանաձև բիզնես մոդելներ» հասկացությունները և բացահայտել դրանց գործնական կիրառման հիմնական ուղղությունները սննդարդյունաբերության ոլորտում,

- Պանելային տվյալների էկոնոմետրիկ վերլուծությամբ բացահայտել շրջանաձև տնտեսության մոդելի և կայուն զարգացման միջև առկա կապերը, մասնավորապես Եվրոպական միության 27 անդամ պետությունների տվյալների օրինակով,
- բացահայտել ՀՀ-ում շրջանաձև բիզնես մոդելների հիմնական կառուցակարգերը, դրանք խթանող պետական քաղաքականության ուղղությունները, ինչպես նաև միջազգային փորձի վերլուծության հիման վրա գնահատել դրանց արդյունավետությունը,
- գնահատել ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի տնտեսավարող սուբյեկտներում շրջանաձև բիզնես մոդելների կիրառման մակարդակը,
- կատարել երկրների շրջանաձև տնտեսության խթանման պետական քաղաքականությունների համեմատական վերլուծություն,
- գնահատել ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում միջազգային պրակտիկայում հաջողված շրջանաձև բիզնես մոդելների ներդրման հեռանկարները,
- բացահայտել սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների զարգացման և ներդրման բնագավառում առկա խոչընդոտները և մարտահրավերները, գնահատել մարտահրավերների միջև առկա պատճառահետևանքային կապերը և կառուցել մարտահրավերների ազդեցության աստիճանի բրգաձև սխեման՝ Fuzzy-DEMATEL մեթոդով,
- մշակել ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրման կառուցակարգերը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակում իրականացված հետազոտությունների ու վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և կիրառական գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորոյթ են հանդիսանում.

- ԵՄ-27 երկրների պանելային տվյալների էկոնոմետրիկ վերլուծությամբ գնահատվել են շրջանաձև տնտեսության և կայուն զարգացման ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապերը, որի հիման վրա ներկայացվել են ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելները խթանող քաղաքականության բարելավման հիմնական ուղիները:

- Բացահայտվել են ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրման խնդիրները, որի հիման վրա, Fuzzy-DEMATEL մեթոդաբանությամբ կառուցվել է դրանց ազդեցության չափի հիերարխիան:
- ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի բնապահպանական ու սոցիալական ազդեցության չափի բացահայտման և միջազգային փորձի համակողմանի ուսումնասիրության հիման վրա մշակվել են ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրման կառուցակարգեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Շրջանաձև բիզնես մոդելների ներդրման տեսական հիմքերը և սկզբունքները համաշխարհային մարտահրավերների պայմաններում»** գլխում անդրադարձ է կատարվել սննդարդյունաբերության ոլորտի համաշխարհային մարտահրավերներին, ներկայացվել են գծային տնտեսության հիմնական դիսկերը, ինչպես նաև հիմնավորվել է շրջանաձև տնտեսության անցման հրամայականը՝ ներկայացնելով դրա տեսական հիմքերը և սկզբունքները:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի վերլուծությունը և շրջանաձև բիզնես մոդելների ներդրման անհրաժեշտությունը կայուն զարգացման համարեքստում»** գլխում հիմնավորվել է ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև տնտեսության ներդրման անհրաժեշտությունը, այնուհետև միջազգային փորձի ուսումնասիրության և էմպիրիկ տվյալների հիման վրա գնահատվել է շրջանաձև տնտեսության դրական ազդեցությունը կայուն զարգացման վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրման խնդիրները և դրանց լուծման ուղիները»** գլխում ուսումնասիրվել են սննդարդյունաբերության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների շրջանում շրջանաձև բիզնես մոդելների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, գոյություն ունեցող գործելակերպերը, ինչպես նաև հիմնական խոչընդոտները և առաջադրվել են դրանց լուծման ուղիները:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք ամփոփված են ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսությունում գծապատկերների և աղյուսակների մեծ մասը չունեն հղումներ, հայտնի չէ, թե, դրանց որ մասն է ատենախոսի սեփական աշխատանքի արդյունքը, որ մասն է փոխառնված: Հնարավոր չէ ստուգել նաև այդ աղյուսակներում ու գծապատկերներում զետեղված տեղեկատվության հավաստիությունը: Բացի այդ գծապատկերներից ու աղյուսակներից շատերը տեքստում չեն հիշատակվում և վերլուծություններ չունեն, ուստի որոշ դեպքերում չի հասկացվում գծապատկերի ու տեքստային մասի տրամաբանական կապը: Օրինակ՝ գծապատկերներ 1.1.3, 1.1.2, 1.1.4, 1.1.5, 2.1.1 և այլն: Նույնը վերաբերում է նաև էջ 24, 22, 50, 120, 121-ում ներկայացված թվական տվյալներին:
2. Էջ 60-61-ում ատենախոսը ներկայացրել է կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն: Հաշվարկվել են սննդարդյունաբերության ճյուղը բնութագրող ցուցանիշի ու մի շարք բնապահպանական ցուցանիշների միջև կոռելյացիայի գործակիցներ, այնուհետ կատարվել է նաև միագործոն ռեգրեսիա, հաշվարկվել են ռեգրեսիայի ու համապատասխան դետերմինացիայի գործակիցները: Ատենախոսը եզրահանգումներ կատարելիս բավարարվել է միայն կոռելյացիայի գործակիցներով, ու ոչ մի անդրադարձ չի կատարել միագործոն ռեգրեսիայի գործակիցներին: Ըստ էության, ռեգրեսիան տեղին չէ ու ոչինչ չի տալիս աշխատանքին: Մեր կարծիքով, ատենախոսությունը այդ կերպ ծանրաբեռնելն անիմաստ է, առավել ևս որ նշված ռեգրեսիան խնդրահարույց է, ու լրացուցիչ հարցերի տեղիք է տալիս:
3. Էջ 56-ում աղյուսակ 2.1.2 -ում ներկայացված կոռելյացիոն հաշվարկների արդյունքներում բացակայում է Food Loss (FL) կախյալ փոփոխականը, ներկայացված են միայն անկախ փոփոխականները ու դրանց միջև զույգային կոռելյացիայի գործակիցները: Արդյունքում չի երևում թե արդյունքային համարվող Food Loss (FL) փոփոխականը ինչպիսի կոռելյացիոն կախվածության մեջ է քննարկվող մյուս փոփոխականների հետ:
4. Ատենախոսության 2.2 ենթագլխում ատենախոսը ներկայացնում է հիմնավոր ու լավ մշակված էկոնոմետրիկ մոդելավորում, որի շրջանակներում 3 տարբեր

մոդելներով գնահատում է մակրոտնտեսական ցուցանիշների ու շրջանաձև տնտեսության բնութագրող ցուցանիշների փոխհարաբերությունները: Ցավոք, մոդելի արդյունքները ատենախոսության առաջարկությունների ու վերնջնարդյունքի հետ չեն կապվում: Ատենախոսության առաջին գիտական նորոյթը շեշտում է, որ այս էկոնոմետրիկ վերլուծության արդյունքները հիմք են հանդիսացել առաջարկությունների, առանցքային ռազմավարությունների մշակման համար, սակայն ատենախոսությունում գետեղված առաջարկությունները կոնկրետ չեն կապվում ներկայացված էկոնոմետրիկ վերլուծության հիմնական արդյունքների հետ:

5. Ատենախոսության 2.3 ենթագլխում ատենախոսը քննարկել է Հունաստանի և ՀՀ օրինակներով շրջանաձև տնտեսության մասով պետական քաղաքականությունը: Ենթագլուխը վերնագրված է որպես համեմատական վերլուծություն, սակայն վերջինիս բովանդակությունը էապես չի հարում ատենախոսության հետազոտական նպատակին: Չնայած կատարված մանրակրկիտ վերլուծությանը՝ ստացված արդյունքները ոչ մի կերպ չեն կապվում ատենախոսության մեջ ներկայացվող առաջարկների հետ: Օրինակ, չեն քննարկվել Հունաստանի օրինակով առկա բացերը կամ ընդհակառակը ուժեղ կողմերը, որ ՀՀ-ում կարող են օգտագործվել: Ստացվում է, որ այս ենթագլուխը առավելապես ինքնանպատակ վերլուծություն է, որը ատենախոսության վերջնարդյունքին ոչինչ չի ավելացնում: Բացի այդ ատենախոսությունը կշահեր, եթե կետ առ կետ ներկայացվեին ՀՀ և Հունաստանի պետական քաղաքականության մոտեցումները շրջանաձև տնտեսության բնագավառում: Նման մոտեցումը գոնե կձևավորեր որոշակի կոնկրետ արդյունք կատարված մանրակրկիտ վերլուծություններից:
6. Ատենախոսությունը առավել կշահեր, եթե ներկայացված առաջարկությունները լինեին ավելի կոնկրետ: Օրինակ, 1-ին, 2-րդ, 8-րդ առաջարկությունները ներկայացվում են առանց որևէ հիմնավորումների, կամ ներկայացվում են ցուցանիշներ, որոնց հաշվարկի համար ոչ մի հիմնավորում չկա: Մասնավորապես, ատենախոսը նշում է, որ ըստ իր հաշվարկների, ՀՀ Կառավարության կողմից ֆինանսավորվող առաջարկվող ծրագիրը տարեկան կպահանջի 35430000 ՀՀ դրամ, սակայն թե որտեղից է վերցվել այս թիվը՝ կամ ինչի վրա հիմնվելով է ներկայացված՝ բացակայում է, նույն կերպ առաջարկվում է 150000 դրամ տրամադրել կրթական ու հետազոտական կազմակերպություններին՝ նպատակային աշխատանքային փաթեթներ մշակելու համար, որը ևս չունի որևէ հիմնավորում:

7. Ատենախոսությունը առավել կշահեր, եթե ատենախոսը ներկայացներ մեկ կոնկրետ հաշվարկային շրջանաձև բիզնես մոդելի օրինակ: Օրինակ, աշխատանքում արդեն իսկ քննարկվել է շրջանաձև ու ավանդական գինու արտադրության հաշվարկները, կարելի էր դա զարգացնել և ՀՀ համար մշակել շրջանաձև բիզնես մոդել՝ բիզնես պլանով: Աշխատանքում առանձին ենթագլուխներ են նվիրված շրջանաձև բիզնես մոդելներին, ցավոք բացակայում են նման բիզնես մոդելների կոնկրետ օրինակների քեյս սթադիները: Օրինակ, ատենախոսությունում չկա գեթ մեկ անդրադարձ այնպիսի հայտնի շրջանաձև բիզնես մոդելների օրինակների, ինչպիսիք են Պատագոնիան, Ֆիլիպսը, LՈՒՓ-ը և այլն, կամ OLIO, Karma և նմանատիպ այլ կազմակերպություններ, որոնք որդեգրել են շրջանաձև բիզնես մոդելներ: Աշխատանքի գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե ատենախոսը ներկայացներ շրջանաձև հաջողված բիզնես մոդելների օրինակներ ու այնուհետ 3-րդ գլխում ՀՀ համար կոնկրետ առաջարկությամբ հանդես գար՝ հաշվի առնելով քննարկված այդ հաջող բիզնես մոդելների փորձը:
8. Ատենախոսությունում առկա են շարադրանքի ու խմբագրական բազմաթիվ վրիպակներ: Մասնավորապես որոշ ենթագլուխներում ատենախոսը զուտ տեղադրել է իր հեղինակած հոդվածները առանց խմբագրելու և ատենախոսության ֆորմատին համապատասխանեցնելու, հղումների ոճը ատենախոսությունում պահպանված չէ, բացի այդ վրիպակներ կան գծապատկերների համարակալման ու հերթականության մեջ, էջ 23-ի առաջին պարբերությունում ատենախոսը նշում է «ստորև ներկայացված է սննդի թափոնների ու կորստի բացատրությունը ըստ ՄԱԿ-ի և ԵՄ-ի» ու միտքը այդպես էլ կիսատ է մնում և չի շարունակվում: Ատենախոսության 79-րդ էջի երրորդ պարբերությունում նշվում է աղյուսակի մասին, որը բացակայում է տեքստում: Գծապատկեր 2.1.3-ը թերի է վերնագրված, չի հասկացվում խոսքը ՀՀ սննդարդյունաբերության ճյուղի մասին է, թե՞ գլոբալ տնտեսության մեջ սննդարդյունաբերության մասնաբաժնի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Զավենի Մարկոսյանի «Շրջանաձև բիզնես մոդելների ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն,

որն ուղղված է Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրման հեռանկարների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները կարող են գործնական կիրառություն ունենալ սննդարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունների, ՀՀ Էկոնոմիայի նախարարության, ինչպես նաև հետազոտական կառույցների համար ծրագրերի մշակման և հետազոտությունների իրականացման համատեքստում: Մշակված գործելակերպի, կառուցակարգերի և ոլորտի խթանման քաղաքականության մշակումն ու իրականացումը կարող են խթանել շրջանաձև տնտեսության զարգացումը ՀՀ-ում:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորոյթը: Հեղինակի կողմից հրապարակված 5 (հինգ) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Դավիթ Զավենի Մարկոսյանի «Շրջանաձև բիզնես մոդելների ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 5 (հինգ) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (13.12.2024թ., արձանագրություն թիվ 19):

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու**

Հ. Ս. Ասատրյան

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**

Ա. Գ. Մատինյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
Հ.Ասատրյանի և նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ Ա. Մապինյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում
եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու

Երանյ

Ե.Ա. Հակոբյան

«16» դեկտեմբերի, 2024թ.

